

բառին գ-ը հնդերոպական *gh-*էն լինի, ս. ըովհետեւ այս պարագային՝ քմականի պիտի վերածուէր. եթէ բառն հնդերոպական է, գ-ը *W* միայն կրնայ ներկայացնել: Եւ արդարեւ գեղծ՝ փափաք կը թուի լատ. *uolo* և յն. *ἔλεγομαι* և *ἔλεγομαι* բառերու արմատակից. ընդարձակումը միայն կը տարբերի, հայն ունենալով *ց,հ*, մինչ յոյնն ունի *π* և *δ*. — Էջ 454, շու՛րի *u-*ն կը համապատասխանէ Մնս. *çloka-*ի *k*ին. *ka* մասնիկը նախնական չէ, ուստի Մնս. *k* պէտք է համեմատել նախնական ընդարձակման մը հետ. ընդհակառակը լիթ. *klausau* ունի *s* ընդարձակումը. հմմտ. հայ. յռայ. — Էջ 474, մագրի գործ շու՛րի ծն՛ջ բառին հետ՝ որուն հետ համեմատելի է եղուեցե (*Grammont, Dissimilation Cons. էջ 74*). — Էջ 473, իբրեւ օրինակ *du-*է ծագած հայ. *կ-ի կարելի է գնել նաեւ մեղի, \*meldwi*, ինչպէս լատ. *mollis*՝ \**moldivis*-էն. հմմտ. ինչ որ կ'ըսէ Հիւբշ. յէջ 445 երկու բառին վրայ. — Էջ 478, Սանս. անա բունը գոր Հիւբշ. կը յիշէ հայ. *ե-ին* և լիթ. *անս-ին* հետ՝ բոլորովին տարբեր իմաստ ունի. աս բունին գործիականին համար միայն կը գործածուի, և անշուշտ կը ծագի պարզապէս նախկին անա գործիականէն. Նոյն էջ՝ կը թուի թէ ճիշտ բառին մէջ պահուած եի մասնիկը ուրիշ բառերու մէջ ես կը գտնուի. հմմտ. *նայիլ* և *հայիլ*, յեճոռլ և նեցոռլ. — Էջ 484, ոչք \**պպոն-էն* (աղաւաղութիւն — *պպոն-ի*) կանոնաւոր է. ճուն չկրնար զայ ոչ \**անպոն*, ոչ ալ \**տապոն* ձեւէ, այլ միայն \**տապոն-էն* և կը ներկայացնէ նոյն փոփոխութիւնը. ուրեմն պ դարձած է ոչ՝ հնդեր. *ou-*ի հայ. *ոյ-*ի վերածուելէն ետք միայն. — Էջ 497 Մնս. *դրապսաս* ի (կաթիլ) դ-ն հին *dh* չէ. հմմտ. *Wackernagel. Altind. Gramm. Ա. 242*.

Բառական երկար ցուցակ մը կը պարունակէ, սրբագրութիւններ և յաւելումներ գրքին Ա. մասին վրայ՝ որ անցեալ տարի հրատարակուեցաւ. կայ նաեւ կատարեալ ցանկ մը հայ և ուրիշ հնդերոպական լեզուաց համեմատեալ բառերուն. պր. Հիւբշ. իրանեան, ասորական և յոյն փոխառութիւն.

ներուն ցանկը չէ դրած՝ գրքին ծաւալը չընդարձակելու համար. սակայն ցուալի է այս՝ զոնէ իրանեան փոխառութիւններուն համար, որոնք շատ անգամ հնագոյն ձեւը կը ցուցնեն: Բոլոր ընթերցողք պիտի փափաքին որ պր. Հիւբշման երկար չսպասեցնէ այսչափ անհրաժեշտ գրքի մը շարունակութիւնը:

A. MEILLET

Գ Ե Ն Գ Ա Ն Ա Ր Ա Ն

ԱՐԱՂԱՐ ՔԱՀԱՆԱՅ Կ. ՊՈՂՍԵՑԻ

(Շար. և վերջ, տես յէջ 66)

**Ո**ՉՆՈՑ բաժինը փակէ Աբրահամ Կառապելեալ հսկայ հաւով մի, որ կոչուի թուրքարէն « Սիմուրք. ամեն թռչունցն մեծ է և ա՛հապին կու լինի. « ասեն, թէ որպէս ճայելն գմուկն՝ ի « ջանէ ի բարձանցն և առնու, այնպէս « Սիմուրքն զփզփ՝ ի բարձանց իջան է առ « նու (!): Այնմ ժամանակին (ե՛րբ) շէն և « մարգարակ տեղիքն կու բնակէր, ասեն. « Ազամայ և որդոցն շատ զեն հասուց. օր « մի հարս մի տանէին բարձեալ սայլիւ. և « Սիմուրքն ի վերուստ իջեալ՝ սայլիւ վե « բացուց հարսն, և տարեալ հեռաւոր լե « բանց վերայ եգեր: Այնմ ժամանակին « նահապետքն Աստուայ ինկղբեցին աղօթիւք, « թէ, Տէր Աստուած, քոյին հրամանապ « երթայ Սիմուրքն ի Օման կղզին, և այլ « չեքեւի (ի) բնականութիւն մեք. և Աս « տուցի հրամանաւն այնպէս եղու: Եւ կայ « ի կղզին այն մեծամեծ փեղեք և մին զլիւրքն « և ա՛հապիտատելի պմէշքն, և այլ սոյնպիւ « սի պատառողք զազանք և թռչունք շատ « կու լինին. ապա Սիմուրք էնոնցմէն չի « վախե՛նար և զեն չի աներ. զիսէ որ ա.

« նասունք իւրեն զեն չի կարեն հասուցանել,  
 « Երփն մեծամեծ ձկունք կու լինին և ծո-  
 « վային վիշապք. ուտէ, և զաւելին այլ  
 « պատառող թռչնոց և զազանազն կու թո-  
 « ղու. զի իջանէ ի բարձանց անգղին զոչ-  
 « մամբ, բմբունէ ժանեօքն և բարձրանայ,  
 « և տանի ի կղզին այն, և այնով կերակրի.  
 « զան այլ գազանքն և զմնացեալսն ուտեն.  
 « և ինքն ելեալ ի բարձր լեռանց զլուխն՝  
 « և նոցա ուտելն հայի և սրտին հնշաւանայ :  
 « Էշ դարձեալ թռչի և թեւս արձակէ ու-  
 « բախուլթեամբ, և որպէս զքամի որ դիպի  
 « ի ծառի միոյ՝ գոչէ ձայնի և շրջադայի ի  
 « վերայ ծովուն. և թէ տեսանէ նաւ որ  
 « կորուսեալ են զճանապարհսն իւրեանց,  
 « առաջնորդ լինի նոցա և ճանապարհ ցու-  
 « ցանէ. վասն զի թէլպէտ զօրաւոր է՝ այլ  
 « խնամածու է :  
 « Պատմութիւն. Ասեն, թէ որ մի նա-  
 « ւորքք երթային ի վերայ ովիխանոս ծովուն  
 « մեծ նաւով և մոլորեցան զճանապարհն  
 « իւրեանց. տեսան ի հեռուստ որ ամպի  
 « նման իրք մի կու գայ. և նաւորքքն շուտով  
 « հասին ի ներքեւն նորա, և սկսան աղա-  
 « զակել և զԱստուած աղայել. և տեսան որ  
 « թռչուն էր. և նա ճանապարհ եցուց նոցա,  
 « և եհան զնոսա և առաջնորդեաց ի յեղեբս  
 « ծովուն, և ապրեցան ամենեքեան շնորհօքն  
 « Քրիստոսի. — Ասեն, թէ Մումուրիին  
 « կեանքն 1700 տարի կու լինի. 500 տա-  
 « բուն յետեւ ձուս ածէ և ձագս հանէ. և  
 « այլ ասեն, թէ շատ աշխատութեամբ ձուս  
 « ածէ. և... ի վերայ ձվուն որձն կու նստի.  
 « և 125 տարին ապա ձագք հանէ, այն  
 « այլ մէկ ձագք լինի. թէ որձ լինի այն  
 « ձագքն՝ որձն նստի և կերակրէ զնա, և  
 « այնչափ քովին ի միմեանց՝ որ հուր ելանէ.  
 « և որձն հայի հեռեւանց, և նա այլ գոյ  
 « միատեղ այրի. և թէ էգ ելանէ ձագն՝  
 « էգն քովին միմեանց, որ նոցա այլ հուր  
 « ելանէ, և այրէ. և էգն այլ հայի հեռե-  
 « ւանց, և գայ ի մօտ նորա և նա այլ այրի  
 « Յետոյ, թէ մնաց ձագն՝ գայ որձն և ձուղ-  
 « սակ լինի » : — Քարի սեւաւուն իր լսածը  
 « գրած է, առանց մեզի իմացնելու՝ թէ այդ-  
 « պէս ձագ է որձ կամ էգ այրուելով՝ ի՞նչպէս

Մեան Սիմուրկը յ'Էօմէն կղզին. իսկ հե-  
 « աեւանց նայելով ձագ ածողայն՝ հարկ էր որ  
 « իրենք չըլլան քովիդքն անոր հետ, այլ թե-  
 « բեւս ձագին երկու ուղբքն իրարու հետ.  
 « վասն զի այսպիսի քովիլ մի յիշէ յոսա  
 « տեղ մի : Եթէ այս առասպելահրաշ հաւուն  
 « վրայօք արեւելեայց աւանդութեան աւելի  
 « փափագող մ'ըլլայ, կըրնայ անոնց բառա-  
 « գրոց մէջ այլ բննել خراسان (Սիմուրդ) ա-  
 « նունը, որ և Աեգա عيسا կոչի յԱրաբաց :  
 « Գ. Թոնշաբանութիւնն աւարտելով մեր  
 « հեղինակն, և Ալսմ հետէ ըսկիսքն արաս-  
 « ցուք, կ'ըլէ, ի ջրային կենդանեացն,  
 « և զբնութիւն, զօգուտն և զենն, և այլն  
 « ամենայն. Աստուածով — ա. Հայերէն  
 « խեցգետին, և ոմանք այլ խաչիփառ ա-  
 « սեն. Ար. Սարաբան, Թր. Էնկէձ, ոմանք  
 « (յոյնք) Պաղտռեայց այլ ասեն : Հանց կեն-  
 « դանի որ դուրեւ չունի. աչքն՝ ի թիկունքն  
 « է, բերանն՝ ի կործքն է. ութ ոտլի ունի.  
 « երկու մեծ ոտլի ունի՝ որ այնով կ'ուտէ  
 « և այնով կու խածանէ, զի որպէս կարիճ  
 « խայթոց ունի. և երկու զինն կու քալէ.  
 « տարին երկու անգամ զկէճէպն կու փոխէ.  
 « բունն երկու դունն կու շինէ, զի թէ յոր-  
 « ժամ որ զկէճէպն կու փոխէ՝ թշնամիք  
 « շատ կու լինին, զի կ'ուզեն որ ուտեն.  
 « երբ որ թշնամին ցամաք զինն կու գայ,  
 « և կու փախի՝ ի ջուրն կու մտանէ. և յոր-  
 « ժամ ի ջրէն գայ՝ ի ցամաք կու փախի,  
 « և այնպէս կու զերծանի : Եւ կենայ մինչեւ  
 « որ կէճէպն թանձրանայ, և ապա ելանէ  
 « և շրջադայի : — Օգուտն այս է, եթէ  
 « ծառն մի որ պտուղ չի բերէ՝ կախին ի  
 « ծառէն, Աստուծով պտուղ բերէ. և թէ  
 « պտուղ բերէ՝ չի թափի : Եւ թէ մարմինն  
 « մարդոյն փուշ կամ երկաթ մտնայ, ծեծեն  
 « և ի վերայ գնեն, քալէ զփուշն և զեր-  
 « կաթն : Եւ թէ օձ կամ կարիճ խածանէ  
 « զմարգն, ծըծեն և ի վերայ գնեն, աղանայ  
 « Աստուծով » : և այլն : Որչափ համառօտ և  
 « լաւ է խեցգետին ստորադասութիւնն, նոյն-  
 « պէս անտարափայ չեմք կըրնար ըսել իր  
 « օգուտնըը :

Յետ խեցգետնի (ք) կարգած է « Հ. կրիայ-  
 « Թր. Քափուտ պողպ. Ծովային և ցամա-

« քային կու լինի. ապա ծովայինն մեծ կու  
 « լինի, անշափ անագին՝ որ տեսնողքն կզգի  
 « կու կարծեն. ասեն ոմանք ի պատմութեանց,  
 « թէ ի ուլիանոս ծովուն նաւորքն ի կզգի  
 « մի ցամաք ելին, և երկաթն ի ծով ձգե-  
 « ցին, կրակ վառեցին, ուզէին որ ուտելու  
 « երեւն, յետոյ սկսաւ տարնը կռնակն  
 « կրեային, և նա սկսաւ կամաց կամաց ի  
 « ծովն մտանել. տեսան որ կզգին ի ծովն  
 « կու իջանէ. թողին զկերակորն և զայլ  
 « անօթան, և հագու փախեան, ի նաւն  
 « մտան, իմացան որ ցամաք չէր այլ կրիայ  
 « էր: Եւ այլ շատ հանդիպել է Հնդստանայ  
 « նաւորքն՝ այնպէս մեծամեծ կրիայներուն :  
 « — Ասեն, թէ յորժամ կրիայն ձուս ածէ  
 « և նստի ի զիմացն հայի, և հայէցքն նորս  
 « ի նա յիպի և ձագս հանէ. վասն այն զի  
 « միտքն իյլ տեղ չէ՝ բայց միայն ի կիթն.  
 « քանկի հրամայէ Տէրն մեր, թէ ոչ կարէք  
 « երկուց տերանց ծառայել, Աստուծոյ և  
 « մամոնայի. և թէ ուզէ մարդս որ իրն  
 « դրամօքն կատարի, միտքն այն խորհորդն  
 « պիտի և ոչ այլ տեղ», և այլն... Ինչ  
 « երկայն իրատներէ վերջը՝ յայտնապէս կ'ըսէ.  
 « թէ կրիայն ի վերայ ձուին նստեր, չէր  
 « լինիր, այլ ամենայն ձուքն շարժեցիկեր.  
 « ապա անհնարիքն հնարաւոր (ե՛ն) մօս  
 « Աստուած, թէ մարդս օրոտով հայցէ » :  
 « Թեսոյ շարունակէ ստորագրութիւնն. « Եթէ  
 « որձն՝ հետ էգին ուզէ մերձաւորել և էգն  
 « փախել և չի թողու որ մօտենայ, երթայ  
 « որձն և խոտ մի գտանէ, առնու բերանն  
 « և զայ ի զիմաց էգին, և էգն որ տեսանէ  
 « զխոտն՝ խոտարհի և հնազանդի նմա. զայն  
 « խոտն՝ ազամորդիքս չեն կարեր գտանել,  
 « « միթէ ի բերանն կրիային տեսանեն և  
 « ասունն. այն խոտին Մերձեքգէնան? ա-  
 « սեն. օձն ի բերանն առնու զայն խոտն  
 « և զուտն ի զուխն դնէ, ուզէ որ ծած-  
 « կէ զզլուխն, և զզլուխն ի ներս կու քաշէ.  
 « և խոտուն սիրուն անշափ հարկանէ զզլուխն  
 « ի վերայ խոտին, որ ինքն այլ կու մե-  
 « րանի », — Փափաքելի էր այս արամորդաց  
 « անգտանելի խոտին գէթ անունը ստոյգ  
 « գտնել. խոտն այլ կրիայէն մնարաւ է, իր  
 « մեծ օգտութեան համար, և այս աւելի

« զիւրին է. վասն զի : « Թորժամ կրիայն ձուս  
 « ածէ, փորէ զգետինն, թզաշափ մի փոս  
 « անէ, և ի մէջ փոսուն ածէ զձուս. և  
 « ինքն զայ եզեր փոսուն, և հայի հանապաղ  
 « զէպ ի ձուս, և ձագս հանէ. և յորժամ  
 « գտանեն զկրիային հակիթն՝ բոլոր փոսուն  
 « մանար փայտ շարէ. զայ կրիայն և տե-  
 « սանէ զբոլոր փոսուն փայտ շարեալ, երթայ  
 « խոտ մի գտանէ և բերէ քսէ ի փայտերն,  
 « և խորտակին. և դու պատրաստ կացիր.  
 « յորժամ որ ի բերանն առնու և բերէ,  
 « դու պատրաստ կացիր, սա : Եւ շատ ի-  
 « բաց օգտութիւն ունի. թէ փակեալ դրան  
 « մի վրան քսեա, բացիլի Աստուծով. և թէ  
 « կոպողաք մի առանց բանալիքով ի վերան  
 « քսեա, բացիլի Աստուծով. և այլ, շատ օգ-  
 « տութիւն կայ ի խոտ այս » :

« Գրանի մի տող (9) Տղարկի վրայօք զրե-  
 « լով, նոր զանազանութիւն մի կ'ընէ կենդա-  
 « նեաց այս ցեղին, և կ'ըսէ. « Այսմ հետե  
 « ըսկիւքն արասցուք ի թիւնաւարացն՝ վիշա-  
 « պաց և օձից և իժից քարեից և այլ թիւ-  
 « նաւորաց : (9) Հայ. Վիշապ. Թորքի էժ-  
 « սերնայ. Եպնի Սինան (Էպու Սինա) ատ-  
 « Վիշապին մեծն 30 կանգուն. կու լինի.  
 « և կու ալլի և շատ ատամուրք ունի. ունքլին  
 « կու երկնայն կու զայ զայլին կու ծածկէ.  
 « վիզն հասա կծու կծու կու լինի : լինի  
 « որ անասունքն կուզ կու տայ, և ինքն  
 « երթայ ի ծառ մի փաթութէ զազին, մինչեւ  
 « որ կու առած անասունքն մարսուլի :  
 « Տանկաց թիւն 624 (1228) ի Հալապ  
 « քաղաքին բոլորն Վիշապ. մի յայտնեցաւ,  
 « ինչ տեղ որ անցաւ՝ այրեցաւ պողածաւերն,  
 « և այլ բազում արտորայք և այգիք այրեցան,  
 « և մարդիկն ցրուեցան ի բոլորն, անչէն և  
 « անտէր մնաց. Աստուած ողորմեցաւ. օր  
 « մի ամպեց և մթացաւ. էջ ամպն որտա-  
 « ըլով, էտա զվիշապն, ոլորելով բարձրացաւ,  
 « մինչեւ որ այլ չերեւեցաւ, շուն մի ազին  
 « փաթութեց, և այրելով ի հետն գնաց և  
 « այլ չի երեւեցաւ : — Վիշապն օգուտ շատ  
 « ունի. եղն, մութն, ատամն և այլ տեղն՝  
 « ամենայն իրաց մի օգուտ է » : Այսպիսի  
 « ըսելէն ետեւ՝ կ'աւելցնէ Աբրահամ. « Ապա  
 « օրինակն չի գտաք, վասն այն չի գրեցաք » :

որով յայտնէ, թէ (զոնէ) վիշապի օգուաները կու քաղէր զըրբէ մի կամ կ'ուզէր քաղել, բայց չի գտաւ այն զիբբը :

Այս ցեղ կենդանեաց յետ վիշապին իր ազգակիցն զրուած է՝ (ե), Օձ. որոյ քանի մի լեզուաւ անուանքն այլ կըր. «Ֆրանս. « գերէն՝ Սէրպի (Serpent), Արաբ. Հայտիչ, « Ֆարսի՝ Մար, թուրք՝ իլլան : Խելանցի « անասուն է և խորագէտ, և վախկոտ է. « պատրաստութեամբ կու կենայ » : Երկայն ստորազրէ օձին բնութիւնն և օգուաներն, բարոյական խրատներ այլ խառնելով. ի (զ) կենդանին թուրք. Սըռնք զրէ, բայց ի ստորագրութեանն՝ Էքուն. փոքր ճանճ մ'է. առաւել « առջութենէ կու լինի, և այնով կու « անցանի տարութիւն ամառանս. զի առաւել « աղտոտութենէ ոչիլ կոթ լինի. և առաւել « տարութենէ հողն կու չորանայ՝ լու կու « լինի. և օրն որ առաւել շերմանայ՝ ճանճ « և Էֆու կու լինի », և այլն : Յետոյ խօսի ճանճի, Ղուի և նմանեաց վրայ : — (կ), Գէլէր. ի լուսանցն զրէ. « Գէրդէնքիէ այլ « ստէ. զոր մենք հայերէն Մողէս կուծիք : — (ը). Լու. թուրք, փրէր :

(թ). Մժեծիս. Թրք. Սիվրի սիճէկ : Աբրահամ միշտ այսպէս զրէ Մժեղ զրուելին. — (ժ). Մարաի. Թրք. Չէրիթիէ : — (ժա). Կարիճ Թրք. Ազակ : — (ժբ). « Մըռչեմ « (Մըլիւն). Թրք. Քարըճէ, բնութիւն, ա. « զահ է, աչքն չի կշտանար, ժողովէ և « ամպարէ : Չարմաթը այս է՝ որ տարին « երկու հաս ցօրեն կ'ուսէ. տես, որ յա. « զահութենէն՝ իւրմէն մեծ իբր կու տա. « նու ի բերանն : Մաշուման կենարք թիչ է, « տարի մի այլ չի լինիր. զհողն՝ սրպէս « զարպաս կու շինէ, վերնատուն, սրահ և « քունճեր, բարձր և ցած. և անդ կու ամ. « պարէ զամենայն, կարգով կու շարէ, և ի « վերայ (մէկ) մէկի զիգէ, մինչեւ որ մարդս « տեսանէ՝ անմնայ : Եթէ մոշէմ մի որ « յուլութիւն անէ և հետ իւրեանց չի գայ « աշխատի, ծանր իրքնին բառնալ կու տան. « և թէ փախչի և չի գայ հետ իւրեանց աշ. « խատիլ, ժողովին՝ և զնա խածանելով « սպանանեն : Եւ զցորեանն որ կու ժողո. « վեն և ամպարեն, երկու կու կիսեն որ չի

« ծըլի և չըուանի. և զբազային կուծեպն կու « հանեն և կտոր կտոր կու անեն : Եւ զար. « ձեալ, եթէ հութ (հիւթ) քաշէ՝ զժողովածն « հանեն ի յարուն և չըբընեն, և այլի պա. « հեն. և յորժամ որ անդ լինի՝ շուտով կու « ժողովեն՝ որ անճրեւ չի հոտանէ, և ի բուն « կու կրեն շուտով » : — Յետ քանի մի օգուան յիշելու, վերջացընէ այսպէս. « Եւ թէ « զհակիթն՝ ի մէջ ժողովոց ցանես, ցուրի « և չի միաբանին, և բաժանին » : Շատ պարզ, զօրուոր և աման զեղ՝ մարդկային ընկերութեան մեծագոյն չարեաց, եթէ ստոյգ ըլլար :

Յետ այս մանրիկ կենդանեաց՝ կարգէ Աբրահամ զԱյլլափերպ, որը « չեն նման « ամենայն անլամբ նոցա՝ Ազամորոյն ». և նախ զնէ զԱճուս և Մաճուս, որ են Գոլգ և Մագոլգ, ըստ Ս. Գրոց, և ի մերոց և յօտար արեւելեայ պատմչաց պէսպէս ա. աստպելեալ հիսիաբարնակ ազգք են ի Եովկաս, Դարբանտայ լեբանց պահակին քովբըր : — « Ալլակերպք շատք են, բայց սակաւ մի « պատմեցից փոքր ի շատէ, Աստուածով » : Չայտ ըսելով, զրէ « թ. Մէկէք. Սըբա այլ « ազգ մի են. ի մէջ աւազին բնակեալ են, « Էճուս և Մէճուս մօտ են, քան զսոսա « մօտ մեզ. այսոր Ֆիլի նման ականջ ունին. « մէկ ականջն ներքեւն կու փակին և մէկ « ականջն վրաներն կու ծածկեն. զինչ ա. « նուն (?) կղզի մի կայ՝ անդ կու բնակին « ի մէջ աւազին, մօտ ի Չին. և սոցա « երեսըն՝ շուն նման են, այլ անդամքն՝ « մարդոյն կու նմանին ». և այլն : Այս կերպով քանի մի ազգեր այլ ստորազրէ համաօտ. որոց՝ « զ, ազգ մի այլ կայ՝ որ Նիսևաս « ասեն. կէսն մարդուն կերպարանք ունին, « կէս զլուխ, ձեռքն մէկ, ոտքն մէկ. մարդ « մի որ կիսես՝ անոր նմանի. այնպէս վազեն, « մարդոյ պէս կու զրուցեն Էլմէնու աշ. « խարն կու լինի » :

ը. Ութերորդ այլակերպն « Յձպիևուուուք » ? Թուի Ս. Գրոց մէջ յիշուած Ուլգ հակայն Բասանու, որոյ երկաթի զահոյքն կամ ան կողինն՝ ինն կանգուն երկայն էր, հակայից կանգնով, չորս կանգուն լայն (Բ, Օրէնք, Գ, 11). Իսկ Աբրահամ և ոսկից որ ինքն

առած է այս աւանդութիւնս, կ'ըսէ հակային համար. « Աղէկ զեղիցիկ տեսակով էր, եր-  
 « կայնութիւնն 3300 կանգուն աւելի էր.  
 « Նոյեան ժամանակն կայր, յորժամ որ ջուրն  
 « աշխարհ ծածկեց. ջուրն մինչև ի մէջքն  
 « նորա եկաւ: Նոյ յորժամ նաւ կազմեաց,  
 « աստուակն և փայտ գտնալն յաճակեցաւ  
 « (պակեցաւ ըսել կ'ուզէր). յՈ՛ւն (Ո՛ւղ)  
 « գնաց ի Շամայ երկրէն. ուսովն երկու հատ  
 « ծառ եբեր, և այնով կատարեցաւ տապանն,  
 « և Աստուած փրկեաց զՆոյ ի ընկերմանէ »:  
 Ո՛րիչ տոտսպել այլ. Մովսէս իսրայելացոց  
 « ցեղերը համբլէն վերջը, « յԱճեցնոց վրայ  
 « նայեցաւ. գնաց քար մի գտաւ (Ո՛ւն),  
 « կ'ուզէր որ բերէր իսրայելացոց ազգին  
 « վրայ ձգեր. այն քարն այնչափ մեծ էր...  
 « վերոց զլիւնն վերայ զայն քարն. իմացաւ  
 « աստուածախօսն Մովսէս, գնաց գաւազա-  
 « նան ի ծունկն եհար յՈ՛ւնուն, սատակեց:  
 « Այս առասպելս ի Տանկաց գիրն էր գրեալ,  
 « և անտի գրեցի. ասպ ի մեր գրեանսն  
 « չի հաւատալի է նոցա առասպելեացն. և  
 « թէ զրէր որ զՏանկացն առասպելն, ըզտու  
 « մի բնա զիրք կու լինար»: Բարբաղդա-  
 « բար Աբրահամ դիւրահաւատ չէ եղած  
 « յայմ մասին. բայց ասիկ վերջ այլ յիշէ ք,  
 « ժ, ժա, այլակերպներ, կէս մարգանման կէս  
 « դազանաց և ուրիշ անասնոց կերպ. յետոյ,  
 « ժք գրէ. « Խալիֆէն Մէքլիտար՝ Պուկար  
 « պարոնին գեսպան գնաց. ասաց, թէ անդ  
 « մարդ մի տեսայ, 12 կանգուն երկայնու-  
 « թիւն ունէր. Պուկարաց պարոնն ասաց,  
 « Այս մարդս ծով որ կանգնի, մէջն չի  
 « հասնիր, (անշուշտ յեզրեք ծովուն, ոչ ի  
 « խոր). չի գիտեր որ աշխարհէ է, չէր  
 « խօսիր, և բան մի չէր ուզեր, յետոյ մե-  
 « ուս: — Պատմեաց մեզ որ մի Շաֆի հին  
 « շէխն. իտէրիմ? աշխարհէ մարդ մի տե-  
 « սայ, մէջէն ի վայր մէկ՝ մէջէն ի վեր  
 « երկու մարդ լինի որ կու կալին և պա-  
 « տերազմին մին հետ միմեանց. լինի որ կու  
 « հաշարն: Ժամանակաւ մի այլվի գնացի  
 « և մէկն մեռաւ. յայնժամ անցաւ այն մարդն  
 « ասեսայ որ մէկ էր մնացեր, մէկն չկայր »:  
 Նոր ժամանակում այլ այսպիսի հրէշք տես-

նուած են, բայց մէկուն մեռնելէն վերջը  
 միւսն այլ շուտով մեռած է:

Չկունք յետին բաժին են կենդանեաց՝  
 Աբրահամու գրոց մէջ. ի վերնապրին կ'ըսէ.  
 « Ի սկիտրն արասցուք ծովային Չկանց և  
 « Ժրժմելկաց, և այլ ցեղացեզ անասնոց և  
 « գազանաց: Ասեն, թէ 600 ազգ կենդա-  
 « նիք ի ծովն կան, և 400 ի ցամաքն. զի  
 « հազար ազգ կենդանիք ստեղծեալ է Աս-  
 « տուած »: Այսպիսի Չկանց ազգերէն՝ նախ  
 « յիշէ չորս տեսակ. « Չուկն որ ի Թունայ  
 « (Գանուբ) ջուրն կու լինի, այսպիսի են.  
 « ա. Մոռքեայ » (Մորիհա). ք. Միհրսին.  
 « Գ. Սազան. Գ. Եսային. մէկ մէկ երկու բան  
 « գրէ ասիջ երկուքին զրայոց, միւս երկուքին  
 « աւելի կարճ. ըսենք առաջինն. « Մոռքեայ  
 « ձուկն մեծ է, մինչև 40 կանգուն կու  
 « գտանի. ասանց թեփի է և զէր է, և  
 « մարդոյն փնա չի աներ. միսն անուշ է.  
 « լինի որ տասն կանգառ ձու կու հանեն ի  
 « միջէն, և զայն ազով կու խառնեն և այն-  
 « պէս կու պահեն. զոր խառնար անուանեն,  
 « և ընուն ի Ֆուլիքն (տակառ) և բերեն ի  
 « ըստամագլ. 10 տիրէմ՝ սպիտակ մի ծախեն,  
 « և ասնին ի ֆուռագոտասն, 5 տիրէմ. (տիրէմ)  
 « սպիտակ մի կու ծախեն, և զմիսն կու չոր-  
 « ցըրեն և մուխ կու կախեն, և չոր միսի  
 « նման կու ծախեն: Եւ այլ. թէ զմիսն  
 « տապկեւ կիթով կամ շուրլայ եփես քա-  
 « ցախով և զաֆրանով, անուշ կու լինի:  
 « Եւ այլ. թէ ի վերայ քոսին (կրակախառն  
 « մոխրի) սխտորով և քացախով եփած տաք  
 « տաք ի վերայ ընուս, այն այլ անուշ կու  
 « լինի »:

Միսինի համար կ'ըսէ. « Այս այլ Թունայէն  
 « կու ելանէ. մինչև 3 կանգուն կու գտանի,  
 « և որպէս, զփուշ սուր ունի ի կոնակն:  
 « Չուկն կու հանեն, ազով խառնեն և պա-  
 « հեն. ի մէջ ոչխարի փորուն կու ընուն, և  
 « այնպէս տասնին աշխարհէ աշխարհ. և դարայ  
 « (սեւ) խառնար անուանեն. այսոր խառնարն  
 « այլ ազնիւ է քան զՄոռքեայ ձուկանն:  
 « Հոռոմոց և Ֆրանցոց մեծ կերակուրն պահոց  
 « և ուտուաց՝ այս է. և պատրիարքն և ե-  
 « պիսկոպոստունքն և խաբեղայքն նոցա՝ պա-

« հոց զայս ուսեն , և ի վերան սակաւ մի  
 « գինի խմեն ջրով : Էլ զմիսն շորցընեն  
 « որպէս զշորմիս , և տանին ամենայն աշ-  
 « խարհ , ազնուագուն է : Էլ այլ բազում  
 « ձկունք կան ի մէջ թուռայ ծովուն (գետոյն) ,  
 « զոր համարն՝ միայն արարիչն գիտէ » :

Թուռնայէն եշնելով թուի թէ Աբրահամ  
 հնդկային տիկիանոսի ձրկներն ուզեր է քննել .  
 գտնէր է թէ ոչ . — քանի մի թուրթ պարսպ  
 թողլով , իրբեւ թէ գրած ըլլար , կ'ըտէ .  
 « Այսպիսի կենդանի կայ ի Հընդըստանու  
 « ծովն , զոր Ուլիանոս ասեմք , և յառապն  
 « (Արար) Պէհրի—մուսիս ասէ . այս ծովուն  
 « եզերն ոչ ոք ի մարդկանէ տեսել չկայ .  
 « բայց միայն Աստուած գիտէ » : Մէկ տե-  
 սակ ձուկ մի յիշէ այս մեծ ծովու մէջ ,  
 մեր Սղոցաձուկն կոչածն . « Գազան մի կայ  
 « որ կանակն որպէս զսոց է , և հանապազ  
 « թշնամի է նաւացն . զի նաւուն տակն մտանէ ,  
 « և որպէս զսոց կորէ գնաւն և երկու կիսէ .  
 « և յորժամ նաւորդքն տեսանեն զձուկն  
 « զայն՝ թրմպուկ հարկանեն և ձայն ածեն .  
 « ի ձայնէն վախէ , և ի բոցոր նաւուն չի  
 « գայ . և այնպէս զերծանին ի նմանէ : (Բա-  
 « րայկան) . Նաւն օրինակ է աշխարհիս , և  
 « զազանն այն օրինակ է սասանայի . . . :  
 « Նաւն որ թեթեւ լինի՝ չի կարեր զնաւել ,  
 « երկու պատճառաւ . մի վասն պահպանացն՝  
 « որ կոչին թրփիք (Գլփիք) , որ պահեն  
 « գնաւն . և մի՛ վասն թեթեւութեան , զի  
 « ոչ կարէ կորել » . զարձեայ բարոյականաւ  
 վերջացընէ :

Անշուտ անճրկած մեծ և օտար ծովուց  
 ձրկները ճանչնալ և ստորագրել , Աբրահամ  
 իրեն ծանօթ է սիրելի է . Պոլսի ծովուն  
 ձրկները պիտի ներկայացընէ մեզ . նախ ընդ-  
 հանուր ձկանց բնութեան կամ մտոց համոյ  
 և օգտից վրայ յառաջաբանելով . « Զուկն .  
 « այն ձուկն որ փոքր է , անար միսն անուշ  
 « է և օգուտ , և խիստ զեր չի լինի . և գունն  
 « դեղին եւս չի լինի . և կեցուածքն ի օտար  
 « ջուր լինի , և քար և աւազին ջուրն . և  
 « նոյն ձկանն միսն անուշ և շուտ հալի և  
 « համով , այն պատճառին համար որ խիստ  
 « գէր չի լինի : Էլ այն որ մեծ է՝ գանձն  
 « աղէկ կերակրէ , բայց պեղծ խըլտ ընծայէ :

« Էլ այն ձուկն որ հոտն զէշ է՝ ի պեղծ և  
 « ի հոտած ջրէ ընծայել , և գունն սեւ լինի  
 « և կամ դեղին , պեղծ է . և ինքն զէր  
 « լինի և մանոր , զմարդն տարցընէ և շահ  
 « ասնէ : Էլ լաւն այն է որ կամ ընդուզի  
 « կիթով և կամ հոտ՝ ձիթով տապկեն և  
 « պղպղ և ձէթ խառնեն , և աղ և եղ այնոր ,  
 « սնուցած զենճէպիլ , և յանպակ գինի քիչ  
 « մի խմեն , և ջրին համբերեն , այնպի որ  
 « կարէ դիմանալ : Էլ թէ խորովես՝ այլ  
 « թեթեւ է և շուտ հալի : Էլ աղի ձուկն  
 « չէ աղէկ , բոր և քոր ասնէ , և աղի  
 « պալլում ընծայէ , և գնութիւն աւերէ ,  
 « և արժուիք (ջրոց) ասնէ . այն պատճառին  
 « համար՝ որ շատ ջուր տայ խմել և շտայ  
 « գողով . և լաւն այն է որ քաջիտով եփեն  
 « և հոտ՝ ձիթով տապկեն . և յետ այնոր  
 « պանիտ շաքար և կամ մեղր ուտել օգուտ :  
 « Էլ ձուկն որ ի պողի և ի ձուկին մէջն  
 « կենայ և թածայ մնայ և շաւերէ , միս  
 « նորա անուշ է քան զայլն՝ մէջքն և աղին  
 « անուշ է , այնոր համար որ ի ժր շարժան  
 « է . և քոփ և պորան զայիգ (կարծր) է .  
 « և գլուխն զէր է և յուշ հալի : Էլ լաւն  
 « ձուկն այն է որ մանկր լինի և կարմիրաւ .  
 « խառ և քաղցր ջուր լինի . և ծովուն ձուկն  
 « ծանր և պեղծ է . և զրած է ի Մուսիսաւ .  
 « կան զիրքն , թէ ամենայն ձուկն ու (որ)  
 « թեւ ու թեփող շունի՝ պեղծ է , չէ պատեհ  
 « ուտել » :

Ետ այս յառաջաբանիս է . Պոլսի ձրկներն  
 յերեւան գան , որոց հետ քանի մ'այլ զե-  
 աունք կամ խեցեմորթք , միանգամայն 56  
 տեսայ . որոց ստորագրութիւնն համառու է ,  
 25 երես միայն , այսու վերնագրով « Այժմն  
 « ասասուցք ի Էդուսանդիանու ի ծովէն ելած  
 « ձկանց և ժժմկանցն , թէ Աստուած կամի :  
 « ա . Զուկն որ խօնուց պալլղի ասեն ,  
 « (Գլփիք) , մեծ ձուկ է , մինչեւ հինգ կան-  
 « զուն կու լինի , զէր է քան զամենայն  
 « ձկանց , երամով շուրջ կու գան մինչեւ 1000  
 « կամ 10000 ի մի տեղ շուրջ կու գան .  
 « անդեն են , ոչ ի մարդոյն զեն անեն և  
 « ոչ ի նաւուց . չեն որսար , զի հրաման  
 « չկայ . թէ գտանեն որսած ի ձեռն ումեք ,  
 « ճորում (տոյժ) կու առնան : Թէ եփես՝

« զեղն առնուս, մէկ ձըլէն 40 լիտր եղ կու  
« ելանէ. և զմիսն չեն ուտեր :

« ք. Զուկ, որ ֆլըչպարդի ասեն (թրա-  
« ձուկն) : — գ. Քալքաս ձուկն որ ի Սիւ  
« ծովէն կու ելանէ, տափակ է և բոլոր սկր  
« ունի ի վերան՝ որպէս գիտու. թեփ չունի.  
« տապկեն ձիթով և շորվայ անեն զաֆրա-  
« նով և քացախով, քան զամենայն ձկունն  
« պատուական է :

« Գ. Լիվիթէք ձուկն : — և. Քէֆալ ձուկն.  
« մինչեւ կէս կանգուն կու լինի. թեփ ունի.  
« միջի ձուն կու չորացընեն որպէս զշոր միս,  
« և 5 ցրմմ. սպիտակ մի կու ծախեն. անուշ  
« է և պատուական, ավենայն աշխարհն եւս  
« առաւել իսկէնտէրիէ. կզգի մի կայ Ապստո  
« ասեն, Քէֆալ ձուկն անց շատ կու լինի.  
« և զձուն ուտեն և չորացընեն, և ամենայն  
« աշխարհ, եւս առաւել Ֆրանգաց տունն  
« նաւորէք զայն տանին. 5 տմմ սպիտակ  
« մի ծախեն : Եւ Քէֆէն այլ կու լինի և  
« Ազար. ապա գնոջ է, և արմաղան կու  
« տանին. մտմով ծեփեր են. այնպէս երկիրէ  
« երկիր կու տանին :

« գ. Զուկ որ Լաքերտայ ասեն. ձմեռան  
« ժամանակն վեր կու լինի, աղեն և չորա-  
« ցընեն և ի մուխն կախեն որպէս զշորմիս.  
« անուշ կու լինի և թուրշի այլ գնեն աղով.  
« և տանին երկիրէ երկիր. ի թագաւորական  
« կու ծախեն, և շատ խաղինայ կու ժողովն.  
« թեփ չունի. և շատ ուտելն՝ գնն է :

« Է. Փոչոտայ : — ք. Պայառուտ : —  
« ք. Ըշոռմերի (Scumbre) : — ժ. Կոչեօգ :  
« — ժա. Ոչուֆէր : — ժք. Րասաշրիտ :  
« — ժգ. Ըզմարիտ : — ժգ. Թէքիթ (Bar-  
« beau) ձկանց թագաւոր է. գունով կարմիր  
« է. թիզ մի կու լինի, միսն անուշ է. անգէն  
« է. շիրիկով կու տապկեն : — ժն. Զուկն  
« Ըսպասի, որ տափակ է. շիրիկով տափկելն  
« լու է. թեփ ունի : — ժգ. Զուկն իփսիսայ.  
« տափակ է որպէս կալքան. փուշ ունի  
« ափի՛մ շափ է. միսն անուշ է. շիրիկով  
« տափկելն լու է : — ժե. Զուկն Աչերի-  
« նայ (Athérine) զոր ոմանք կոչուուշ պա-  
« ղրդի ասեն. մանր ձուկ է. թեփ ունի.  
« անգէն է քան զամենայն ձկունս. միսն  
« անուշ է. շիրիկով տապկելն լու է :

« Ժք. Զուկն Խամսի (Melette), զոր ձմեռն  
« շատ կու ելանէ, մանր ձուկ է. թեփ ունի,  
« անուշ միս ունի. ապա շատ ուտելն զհին  
« ցան շարժէ. տապկելն լու է. չորացընեն :  
« այլ և թուրշի շինելն այլ լու է : Թորժամ  
« ի Տրապիզոն քաղաքն ելանէ ձուկս այս,  
« մէկմէկի աւետիս կու տան, թըմպուկ և  
« քոս կու ծեծեն, իրախութիւն կու անեն.  
« վասն այն Տրապիզոնցոց՝ Խամսի պաղրդի  
« կու կանչեն, և նոքա կու դիժարնան. զի  
« այն աշխարհն պատուական է ձուկս այս.  
« ապա Ըստամպոլ քաղաքն՝ հազարն սպի-  
« տակ մի չեն առնուր, աստեն կու լինի,  
« անշափ շատ կու ելանէ :

« Ժք. Զուկն Թիրքոգ. ամառն ժամանակն  
« կու ելանէ. փոքր ձուկ է, թեփ ունի.  
« միսն անշափ կակուղ է՝ որ ճորով կարես  
« ձեռօք բռնել. անուշ է. շիրիկ եղով տապ-  
« կելն (լու է) : Գիշերն ճրագ կու վառեն  
« մէջ նաւին, ճրագի լուսոն կու զայ ակնասն  
« կու անկանի. թուրշի այլ կու շինեն. ա-  
« նուշ է :

« Ի. Զուկ մի այլ թուրշի շինած կու բե-  
« րեն ի վենետիկու, մէջ վարելերուն (տա-  
« կառ), նման թեքոգ ձկան. անուշահամ  
« է, և հոտն մշքահոտին նման է. քան  
« զամենայն ձկանց թուրշիքն պատուական  
« է. զոր Ֆրանգ ազգն Սարտեղեայ ասեն » :

Խա. Ղոչմեղղձ : — Իք. Կայեռայ պա-  
ղրդի : — Իգ. Տիչ պաղրդի (Sole) : — Իգ.  
Խամսի պաղրդի : — Ին. « Ղարակօգ. տափակ  
« ձուկ մի է ալլին սեւ՝ որպէս զժարիք  
« քաղաք. շիրիկով տապկելն լու է : — Իգ.  
« կռանչ պաղրդի. կանանչ ու ծիրանի գու-  
« նով է. որպէս զարեգակն կու փայլէ ի մէջ  
« ծովուն, փոքր ձուկ մի է, տապկելն լու է  
« շիրիկով : — Իե. Իլան պաղրդի. Օձածուկն » :

Իը. Տորկեր պաղրդի (S. Pietro) : —  
Իք. « Զուկ մի կայ մէջ աւազի կու լինի.  
« փոքր է, քան զմատ մի երկան. զագաթին  
« փոքր փուշ ունի. եթէ հարկանէ զմարդ՝  
« կու սպանանէ, թէ լիմոնի շուր չի քես  
« ի վերան. քան զկարծին վատ » : — Դ.  
Ըրքրպիտ : — Լա. Թռռուս պաղրդի. « քիթն  
« կընկան նման » :

Դք. Քոչպար(չա) պաղրդի : « Գլուխն

« նման է զորտան , և ազին որպէս զզորտ .  
 « միսն պինա է . զաֆրանով և քացախով շուռ .  
 « մայ կու լինի » : — Իգ . Ֆրանկերի պալլոդի :  
 « Այսքան ձկուճը (այլ) կան որ չեն ուտեր .  
 « (և են) » Իգ . Այի պալլոդի , մեծ է քան  
 « երկու զոմիու մի չափ . կրիայի նման է ,  
 « պուխն նման է արջու , աքն և ձեռքն  
 « ամենայն նման են արջու . ազի ունի որպէս  
 « կրիայի . պուխն մազ ունի որպէս արջու ,  
 « և ի վերայ ձեռացն և ոտիցն այլ մազ ունի .  
 « թէ գտանէ զմարդն՝ ուտէ և պատտառէ և  
 « սպանանէ » :

Ին . Քիտի պալլոդի . — Իգ . Քոփեք պալլոդի . — Ին . Օքուզ պալլոդի . « մեծ է ,  
 « մինչև 3 կանգուն կու լինի . զլուխն նման  
 « է եղան . Չուտ ազգէն զառ մարդ չի ուտեր .  
 « միսն կարմիր է որպէ՞ զնեղի . — Իը .  
 « Չուկ մի այլ կայ Տեկիզ անասի ասեն .  
 « զլուխն և մազն՝ որպէս զկնկանն : երեսն  
 « մարդոյ նման , գեղեցկաւեսիլ , և ձեռքն  
 « այլ մարդոյ նման . միջէն ի վայր ձկան  
 « նման . մարդասէր է , թէ գտանէ զմարդն՝  
 « զմազն ձգէ փաթուժէ և ինքն քաշէ . ան .  
 « չափ խաղայ որ մարդն մեռանի , ապա  
 « թողու և երթայ յատակ ծովուն ի բուն  
 « իւր » : Հին Յունաց անասպեղեւլ Երվու  
 « գտեղքն , Ընգրայքն և Պարիկքն յիշեցընէ :  
 « Իք . « Գազան մի այլ կայ որպէս զլուխն  
 « զլուխն և ոտիւն , զոր կունտուզ ասեն » ,  
 « և Ջրուն կամ Ենջրի :

Իս . « Հում բառով Մոսիկայ ասեն . կունակն  
 « սուկերք մի կայ զոր Արար . Պեհրի զկպիտ .  
 « և թուրք՝ Տեկիզ քոփուդի ասէ . սուկերիչքն  
 « այնոր մէջն կու թափեն ինչ որ լինայ , թէ  
 « սուկի և թէ արծաթ . աւազի տեղու զայն  
 « կու բանեցընեն . եւս աւաւել Ֆոանպաց  
 « սուկերիչքն . մատանին անոր մէջն կալիպ  
 « (կաղպար) կու անեն և կու թափեն : Այլ  
 « կենդանիս որպէս աղիք երկան երկան կախ  
 « որպէս ոտս և ձեռս ունի . և լեղին սեւ է  
 « որպէս թանաք . թէ գիր զբե՞ կու լինի .  
 « Դասք մի Մոսիկայ (Séche) ասեն , աչի  
 « ունի . և թէ լուանաս և եփես , զարձեալ  
 « մանտրես , քացախով և զալբանով շուռվայ  
 « շինես , տարդեղով և պահարով , լաւ կու  
 « լինի » :

Խա . Րիսրափոք հոսով բառով : — Խա .  
 Պեղպարնաք : — Խա . Խալիփաս , հոսով բա .  
 ոտով Ըտուարն (Ecrevisse) : — Խա . « Բա .  
 « զուրեւեք . ինչգեղեկին նման է . զքան գնա  
 « այլ մեծ է ամենեւին նման է ինչգեղեկին .  
 « միայն կուտեն են սեւ է » , և այլն : —  
 Խա . Ինկիէ . հայն Խալիփաս ասէ : Նոր և  
 « անլարմ գրչով մէկն՝ քանի մի թուղթ առջ  
 « պարապ տեղ մի գրեր է . « Հայրեն՝ Էսախ ,  
 « հոսմայերեն . . թուրքի Էնկիէ . 12 ոտ ունի .  
 « ոտով՝ մարդ խնէ » (խածնէ կամ կրծէ) :  
 « Եոյն գրիչն ուրիշ գտաորի երեսի մը վրայ  
 « գրեր է և զայս . « Չուկ մի կայ որ թուրքի  
 « բառով Միտոք ? ասեն . մեծովին մինչև  
 « կանգուն մի լինի . լաւ հացի կերակուր է » :  
 Խն . Քարիտանայ : — Խա . Կիթիկուտ .  
 « Քաղցր գետերն կու լինին . խաշել ուտել  
 « աղով աղկէ է . անզէն է » : Խն . Լոհոսուտայ .  
 « Ըտառքուս նման է . միայն խածանելիք  
 « չի ունի » , և այլն :

Խը . « Այնէի . Խալիփասի նման է . բոլոր  
 « է կէճէպն . հայելի կու շինեն . միսն որպէս  
 « Լոհոսուտայի նման է , խաշել ուտելն որպէս  
 « Ըտառքուս , անուշ է » :

Չկանց նկարագրերն այսով վերջացընէ  
 Արարամ , յետոյ ութ ժամակ աւելցընէ ,  
 թէ է ձկնաց բաժնին մէջ այլ որո՞ւմ և խե-  
 « ցեմարթ կենդանիներ , բայց այս յետին ութն  
 « մանրիկք են , և վերնագրէ . « Այսմ հետէ բա .  
 « կիսքն արասցուք ծովային ժրժկանանցն , որ  
 « կէճէպ ունիցին , որպէս Միտեան :

« ա . Միտեան . զոր կէճէպ ունի . և զմէջն  
 « ուտեն խում (հում) , և եփեն ձիթով  
 « ասպիկեն և խաշեն և փխլու ասեն : —  
 « ք . Ըտարիտեան . կէճէպ ունի . աղի է .  
 « մէջն անուշամ է , խում ուտելն , խաշելն  
 « և ձիթով է փեղն , և այլ ցեղուցեղ կերա-  
 « կուր կու լինի : — գ . Քիթիկ (Պին . Պի-  
 « նայ) . որպէս զՄիտեան է , և այլ մեծ է .  
 « կէճէպ ունի որպէս զմիտեայ , մէջն կու  
 « խաշեն և շուռվայ կու եփեն զալբանով և  
 « քացախով և պահարով : Էն մէջն մազ մի  
 « կայ , զեղ է ականջացալի :

« Դ . Դասաք (կարն) . որպէս Ըտարի-  
 « տեան նման է . ապա որպէս զանայր նախ  
 « ունի . կէճէպ ունի , մէջն ուտեն խում և

« եփած . թէ ձիթով տապկեն՝ լաւ կու լինի ,  
 « թէ քացախով կամ լիմոնի ջրով ուտեն՝  
 « այլ ազէ կէ — ե . Ժուտատեան . որպէս  
 « զՏարաքն է , ապա կուր է , և կէճէպին  
 « մէջն ներկ կու դնեն նախաշքն . մէջն  
 « կ'ուտի խում ե եփած , որպէս զՏառաք :  
 « գ . Սեսեֆ . կէճէպն նախաշքն ներկ կու  
 « դնեն . մէջն կ'ուտի , որպէս զԺուտատեան  
 « է . եփածն լաւ է քան զխումն . — ե .  
 « Գեւատանէ . կուր է . և կէճէպին վրան  
 « փուշ է . մէջն կարմիր է որպէս զձկան  
 « հասկիթ . ձիթով տապկելն լաւ է . և այլ  
 « պէպէտ եփելն կու լինի :  
 « ք . Սուչուան . որպէս եղէզի նման է .  
 « մէջն խաշեն և ձիթով կու տապկեն , և  
 « այլ շուտայ կու շինեն զաֆրանով և քա-  
 « ցախով և պահարով . մաքաի (պինդ) է ,  
 « յուտով » :

Փառք համայնից զոյացուցին :



### ՎԱՆԱՅ ԵՌՎԱԿԻ ԿՂԶԻՆԵՐԸ

## Ա Ղ Թ Ա Մ Ա Ր

(Շար . տես էջ 26)



Ա Ն Օ Թ է արդէն ընթերցողաց թէ  
 Աղթամար Սեւա Լեռին ժողովրդով  
 1144ին նգրվրի տակ ինկնալէ վերջ ,  
 ինչպէս արձակուեցաւ այդ նգրվրէն  
 1290—1295 տարիներու մէջ , Հեթում  
 Բ արքայի ժամանակ : Բայց այդ արձակուեմն  
 նոյն ժամանակ բոլոր ազգին ծանուցուած  
 չլինելով , մնաց իւր մասնաւորութեան մէջ .  
 և ինչպէս կ'երևի՝ Գրիգոր Է Անաւարզեցի  
 կաթողիկոսի յաջորդք եւ՝ ընդ նգրվրք հա-  
 մարած են Աղթամարայ աթոռը , հանոյ չլի-  
 նելով իրենց՝ նորա ինքնազուիս որոշումը և  
 բացարձակ անկախութիւնը : Մեր այս ըսածը  
 կը հաստատեն Միխիթար կաթողիկոսի , ԺԻ  
 դարու առաջին կիսուն մտերբը , ի պատաս-

խանի Լատինաց գրածի մէջ յիշուած հե-  
 տեւեալ տողերը՝ . « Կաթողիկոսն Աղուանից  
 հնազոյն է և կարգեալ յերանկելոյն Գրիգորէ .  
 իսկ Աղթամարայ է արքեպիսկոպոս , և յա-  
 աջնմէ հնազանդ էր կաթողիկոսին . այլ  
 սակաւ ժամանակ է՝ զի եղ անձին անուն  
 կաթողիկոսի . որոյ վասն բանադրեցաւ ի  
 կաթողիկոսէն Հայոց , և ցարդ եւս ի բա-  
 նազարանս է » : Քիչ վերջն այլ կը յաւելու .  
 « Արքեպիսկոպոսն Աղթամարայ յորմէհետեւ  
 ապատարեցաւ ի մէջն , և բանադրեցաւ  
 հանդերձ վիճակակցօք նորա , ոչ կարեն  
 հաղորդիլ ընդ մեզ , թէ ոչ նախ հպատա-  
 կեցին և արձակեցին ի բանազարանաց՝ յո-  
 բում են » : Այսպէս Աղթամարայ աթոռը  
 երկար տարիներ միշտ ընդ նգրվրք համա-  
 բուեցաւ ազգին մեծամասնութիւնէն . այնպէս  
 որ՝ Մեծփեցի Թովմա վարդապետի գրածի  
 համեմատ՝ , Տաթեացի Գրիգոր վարդա-  
 պետը , Սիւնեաց Տաթեաւ վանքին հա-  
 լածանաց պատճառաւ փոխադրուելով Ար-  
 ճէշ գաւառի Մեծփայ վանքը , հոն Հայոց  
 858 և փրկչական 1440 թուին ժողով  
 դամարած և արձակած է զԱղթամար ի  
 կապանաց : Սակայն զեւ չըսած թէ Էնչ  
 կերպով եղաւ Գրիգորի Տաթեաւայոյն մի-  
 շոցաւ Աղթամարայ ի կապանաց արձա-  
 կուելն , լաւ կը համարիմ յիշել նոյն Տա-  
 թեաւցի վարդապետի մի գրուածքը , որ  
 գտանի ի ձեռագիր կանոնագիրս՝ մեր հե-  
 տեւեալ վերնագրով . « Կանոնք և բանք զե-  
 ղեցիկ և յոյժ պիտանի վասն աթոռոյն Աղ-  
 թամարայ որ են ի ներքոյ բանազարանաց » :  
 Երբում հելինական , ազգային եկեղեցոյ

1. Հաւաքմունք ժողովոց . հա . Իս . էջ 1225  
 և 1226 :  
 2. « Եւ ի ոոյն ժամանակի (թ . հ . 858 —  
 1440 թ . փ .) ի խնդր ելեալ վասն կապանաց  
 Աղթամարայ , և մեծահանդէս ժողով արարեալ ,  
 արձակեաց զամենեւին ( ի կապանաց ) հնոց  
 կաթողիկոսացն մերոց » : Թովմա Մեծփեցի ,  
 1860 տպ . Շահնազարեանցի , էջ 52 :  
 3. Կանոնագիրք . բուրապիտ մեծ գրուած ի  
 Կոստանդնուպոլիս Ռճժի ( — 1669 ) թուին .  
 թիւ . 1477 :